կանները, երբ սկիզբ առան հայերի բռնի կաթոլիկացման ձեռնարկումները։ Իսկ մինչեւ այդ՝ եթէ լեհահայ գաղութում պատահում էին լատինադաւանութեան յարած անհատներ, նրանց ո՛չ հայ անունն էին տալիս, ո՛չ էլ անուանում էին արեւելեան ծեսով եւ կամ արեւմտեան ծեսով։ Հենց Պետրովիչի կողմից վկայակոչուած լատինական այնպիսի աղբիւրներում, որոնք խօսում են Լուովի հայերի գործերի մասին, դեռեւս ԺԴ դարի երկրորդ կէսում հայ ասելով հասկանում էին միայն հայադաւանները. այդ աղբիւրների ընձեռած փաստերի հիման վրայ Պետրովիչն ինքը, մի այլ առիթով, գտնում էր, որ «կաթողիկեայ տերմինը դարձել էր լատին-ի համանիշ. իսկ հայ տերմինն՝ իմաստով նոյն էր դարձել հերձուածող տերմինի հետ», եւ մարդիկ այդ անում էին, ինչպէս եզրակացնում է նոյն Պետրովիչը, «յաճախ չփոթելով տարբեր ծէսերը տարբեր դաւանանքների հետ»[20]։

Բայց թողնենք Պետրովիչի մօտեցման եղանակների հարցը։ Մասնագէտներին յայտնի է, որ լատինական աղբիւրներն Armeni ritus orientalis (արեւելեան ծեսով հայեր) կամ պարզապէս Armeni orientales (արեւելեան հայեր) անուանումով միշտ հասկանում են հայադաւան հայերին, որոնց ի տարբերութիւն, լատինադաւաններին անուանում են Armeni uniti (միացեալ հայեր). եւ այդպէս էլ ընդհանրացած է եւրոպական պատմագիտութեան մէջ, ինչպէս տեսնում ենք, օրինակ, հետեւեալ աշխատութեան վերնագրում. D. Dan, «Die orientalischen Armenier in der Bukowina», Czernowitz, 1890[21]։ Այս գիրքը նուիրուած է Բուկովինայի հայադաւան հայերի ուսումնասիրմանը։

Գուցէ անհրաժեշտ է նաեւ յիշել, որ այսպիսի խնդիրներում Հռոմէական Եկեղեցու տեսանկիւնից կայ նաեւ կանոնական հարց։ «Կաթողիկեայ հանրագիտարան»-ում, օրինակ, մկրտութեան հարցերին նուիրուած յօդուածը բացայայտօրէն ասում է, որ արեւելեան եկեղեցիների մատակարարած մկրտութիւններն անպայման վաւերական են եւ կրկնելի չեն[22]։ Նոյն հանրագիտարանի մի ուրիշ յօդուածում, ուր «քրիստոնէական Արեւելք» հասկացութիւնն է պարզաբանուում, ասուում է, որ արեւելեան եկեղեցիներից էին Բիւզանդականը եւ նրանից ծագած եկեղեցիները, ի թիւս որոնց՝ սլաւոնականը (ռուսներ, ուկրաինացիներ եւայլն)[23], որոնց բոլորին յունադաւան էին անուանում։

Արդ՝ որքանո՞վ կարելի է հաւատալի համարել, թէ «եռանդուն կաթողիկէ» Ստեփանոս Սալմասեցին, Հռոմէական եկեղեցուն ծառայութիւն մատուցելու համար, ոտնակոխ անէր նրա ունեցած կանոնական կարգերը, այն էլ հենց նոյն եկեղեցու բացարձակ իշխանութեան սահմաններում գտնուող Լեհաստանում։ Եթէ որեւէ մէկը ուզենար կաթոլիկ դարձնել այդ տաղաներին՝ մկրտութեան հարց արդէն չկար յունադաւանների համար։ Մեզ թուում է, որ բուսական է այսքանը։

Այսպիսով՝ անտարակուսելի է, որ Սալմասեցին, լինելով հայոց կաթողիկոս, փորձ էր կատարել յունադաւան ուկրաինացի երեխաներին հայադաւան հայ դարձնելու եւ ոչ թէ, որպէս լատինական եկեղեցու գործիչ, նրանց կաթոլիկ դարձնելու՝ ինչպէս ներկայացնում է Պետրովիչը՝ օգտուելով «Լուովի դատական վճիռների ժողովածու»-ն կազմողի տգիտաբար կատարած սխալից։

---

[20] PChA p. 16.

[21] Այս գիրքը թարգմանուած է հայերէն. Դեմետրիոս Տան (Դան), «Արեւելեան Հայք ի Գուքովինա» (թարգմ. Հ. Գրիգորիս Գալեմքեարեան), Վիեննա, 1891։

[22] "Enciclopedia Cattolica", vol. II, Città del Vaticano, 1949, p. 1045.

[23] Ibidem, vol. IX, 1952, p. 309–310.